ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

26 սեպտեմբերի 2018թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամներ:

Օրակարգ

1. 2018-19 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան /
2. 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան /
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2018-19թթ. ուստարվա առաջին կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկը, որը համապատասխանում է տվյալ մասնագիտության ուսումնական պլաններին:Վերջինս քննարկվել է ամբիոնների նիստերում , յուրաքանչյուր կուրսի ուսանողների հետ և արժանացել է հավանության, ժամկետները որոշվել է ըստ հաստատված ուսումնական գործընթացի ժամանակացույցի և ընդգրկում է VIII շաբաթը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ,,Դեկորատիվ- կիրառական արվեստի և դիզայնի'' ամբիոն վարիչի ժ/պ Մ.Վ.Հարությունյանը: Նա հավանություն տվեց ներկայացված ժամանակացույցին և առաջարկեց հաստատել 2018-19թթ. ուստարվա առաջին կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել բոլոր դասախոսներին, ընթացիկ քննությունները և ստուգումները անցկացնել ըստ հաստատված ժամանակացույցի, իսկ կատարման վերահսկողությունը դնել մասնագիտության պատասխանատու Լ.Ֆլջյանի վրա:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա նշեց, որ 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակից առաջին,երկրոդ և երրորդ կուրսերից թվով 8 ուսանողներ ունեցել են ակադեմիական պարտքեր, որոնցից երկուսը առաջին լուծարքային շրջանում հանձնել են ակադեմիական պարտքերը, չորս ուսանող հանձնել են երկրորդ լուծարքային շրջանում: Մեկ ուսանող առաջին կուրսից /Սոնա Հայրապետյանը/ 2 կրեդիտ ակադեմիական պարտք, իսկ մեկ ուսանող /Աննա Ավագյանը/ չորրոդ կուրսից հեռացվել է համալսարանից՝ անբավարար առաջադիմության պատճառով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դ.Չիբուխչյանը նշեց, որ հետևողական աշխատանք է տարվել առարկայական պարտքեր ունեցող բոլոր ուսանողների հետ, ինչի արդյունքում մի մասը առաջին լուծարքից հետո, մյուս մասը երկրորդ լուծարքից հետո մարել են իրենց պարտքերը, բացի երկու ուսանողից:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննաշրջանի հաշվետվությունը ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ Ա.Մարգարյանը ներկայացրեց բոլոր կուրսերում 2017-2018 ուս.տարվա ավարտից հետո ռոտացիայի արդյունքները. ,,Դիզայն'' մասնագիտության առաջին կուրսի ուսանող Նոննա Ալավերդյանը անցել է վճարովի համակարգ՝ իր տեղը զիճելով Նարա

Թադևոսյանին, իսկ Անժելա Մկրումյանը՝ Մանե Պապյանին՝ համալսարանի կողմից տրամադրվող ուսման վճարի լրիվ փոխհատուցման տեղը,իսկ երկրորդ կուրսում Կարինե Ալավեդյանը իր անվճար տեղը զիչեց Ագնեսա Իսկանդարյանին, ով օգտվում էր համալսարանի կողմից 100% փոխհատուցման իրավունքից, ինչից 2018-2019ուս.տարում կօգտվի Կարինե Ալավերդյանը, իսկ անվճար համակարգի մնացած ուսանողները պահպանել են իրենց կարգավիճակները:

Կրթաթոշակի նշանակման հարցում ֆակուլտետի բոլոր կուրսերում բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ունեցող ուսանողները 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակում կստանան կրթաթոշակ՝համաձայն գործող կարգի:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ռոտացիայի և կրթաթոշակի նշանակման արդյունքները ներկայացնել տնօրինության հաստատմանը:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք.Հ.Մխիթարյան